Ը. ՏԱՐԻ 2323 | ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 3 ՍԱՀՄԻ 4384 | 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1891 | 20 ՐԷՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1309 | ՇԱԲԱԹ

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՂՐԿԵԼՈՒ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Կ. Պոլսոյ համար Տարեկան ... 151
» » Վեցամսեայ ... 75
» » Եռամսեայ ... 40
... 56
... 28
Ընդհ. Թուղթ ... Տարեկան Օսմ. Ոսկի 2
Գաւառաց ... Ղրշ. 50

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL


Արեւելքի ներկայ համարը, բաց ի իւր սովորական նիւթերէն, կը պարունակէ նաև հետեւեալ յօդուածները.


ԱՌ ԱՂՕԹԱՍԷՐՍ — Ց. Ա. ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ
ՎԵՐԵԼՔ Ի ԽԱՉԱՓԱՅՏ (փշրանք մը Սրտածորէն) — ՈՒԽՏԱՒՈՐ
ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ (Օդավարութեան նոր գործիք) — Վ. ԳԱԼՓԱՔՃԵԱՆ
ՈՐԲԵՒԱՅՐԻՆ — ԵՐՈՒԱՆԴ
ԱՍՏՐԱ (Գրական վէպ Քարմէն Սիլվայի) Թարգմ. Թ. Թ.
ԳՐԱԴԱՏԱԿԱՆ (Նամակներ առ նորապսակ ամուսինս) — ՀԵՐՄԱՆ
ՏԵՂ ՄԸ ՉԵՆՔ ԴՆՄԵՐ (տեսութիւն մը կրթական խնդրոյն վրայ) — ԳԱՍՊԱՐ Գ. ՆԵՄՑԷ
ԱՐԱԳԻԼ ՊԱՀԱՊԱՆ (Նմոյշ մը «Անգիր Դպրութեան» առակներէն)
ԱՍՏԻ ԱՆՏԻ


Կը յիշեցունենք «Արեւելք»ի ձեռքէ գնողներուն որ չմոռնան ներկայ թերթին հետ լրագրավաճառէն պահանջել նաև յաւելուածը որ անջատ թուղթի վրայ տպուած է։ Ամբողջին գինը 40 փարա։

Կ. ՊՈԼԻՍ, 12|24 ՀՈԿՏ. 1891

# ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Խնդիր կը լինի թէ — Հայոց Կաթողիկոսն Ազգէն ընտրուելէ և կայսեր կողմանէ վաւերանալէ՞ յետոյ կը պաշտօնավարէ թէ օծուելէ յետոյ — ։ Ս. Էջմիածնի Թղթակիցն այս խնդիրը լուծելու համար Սինոդի օրագրութեանց մէջէն կը քաղէ իւր փաստեր, որք աւելի նշաններ կամ օրինակներ են եղելութեան կամ պատմական դիպուած որ Ներսէս Աշտարակեցւոյ ընտրութեան ժամանակ պատահեր են և կը հաստատեն թէ Կաթուղիկոսը մինչեւ որ օծութիւն չընդունի չի կրնար պաշտօն վարել, քան թէ հիմնական փաստ։ Ուղիղ և արժատական ապացոյցն այս խնդրոյ՝ հետեւեալ տեսութեան մէջ կրնայ գտնուիլ, զոր Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան քաջահմուտ անձ մը կը հաղորդէ մեզ։

* *

Այս հարցի լուծման մէջ երկու գըլխաւոր ճշմարտութիւն կը փայլի, որք իրարու հետ միացած են, զիրար կը բացատրեն, և Հայոց Եկեղեցւոյ կրօնական ընթացքին աստուածաբանական սուրբ արժէքը կը հռչակեն։ Իներկայութեան այս ճշմարտութեանց թեթեւս ժամանակէ մ'ի վեր միտքերն յու... [illegible]

[illegible]

... միտք Հայոց Թելադրութիւն երկիւղածութեամբ պաշտել իրենց հայրենի աւանդութիւնն, առանց սասանելու ա՛ և է վերջամուտ քաղաքական նորութեանց առջեւ։

[illegible]

## ՎԱՆՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՇԵՀԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ՄԸ

Սպասելով որ լաւ վարդապետներ հասցնէ, Արմաշու վանքն ընտիր չերամ կ'արտադրէ։ Եւ շրջակայ թեմերը դեռ եւս իւր եկեղեցական վարժարանին ընթացաւարտները չըրկած ի քարոզութիւն Բանին կենաց, մօտակայ գաւառներուն կը սփռէ ձեռնհաս մասնագէտի տնօրէնութեան ներքեւ պատրաստեալ իւր առողջ հունտերն չերամի, որք այն կողմի գաւառացւոց նիւթական շահը կ'ապահովեն սքանչելապէս, սպասելով որ մարմնոյ հացէն ետքն հոգւոյ հացն ալ դայ օրին մէկն, և չերամի հունտերուն քով զարգանան ու հասուննան հոգեւոր և ազգային բարձրագոյն կրթութեան մը այլապէս բեղմնաւոր հունտերը։

Մեծ պատիւ կը բերէ Արմաշու վանքին արդի գործօն, հեռատես և բարեյարդար վարչութեան որ այն կարեւոր հաստատութեան բարոյական և նիւթական զարգացման համար ըընաւ միջոց չի խնայուիր։ Արմաշու վանքին մէջ ի գործ դրուած չերամաբուծութեան վրայ լրագրոյս միջոցաւ ի լոյս եկած զոյգ մը յօդուածք ցոյց տուին թէ այս հաստատութիւն իւր շրջակայից համար գործնականապէս ալ օգտակար հանդիսանալու ճամբուն մէջ է այժմ աւելի քան ո՛ եւ է ժամա... [illegible]

[illegible]

... հաւոր գործ մը կ'ընեն։ Նոյն վստահութեամբ վանական վարչութեանց ևս կոչում կընանք ընել՝ յայսմ մասին առաջնորդ լինել իրենց թեմօրէից ժողովրդեան, ներշնչուելով Արմաշու վանուց իմաստուն վարչութեան կարի շահագրգիռ ընթացքէն։

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Սերպ կառավարութիւնը փութաց իւր ջերմ շնորհակալիքն յայտնել Զաբըին կառավարութեան, որ, ինչպէս անցեալ օր ծանուցինք, Լիւրաքանչիւրն ութ հատ խոշոր պաշարման թնդանօթ պարունակող 12 հրետանի (ընդ ամենայն 96 թնդանօթ) նուիրած է Սերպիոյ։

---

—)( 76 )(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

# ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

## ԺԻՒԼ ՄԱՌԻ

### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՄԵԾ ՃԱՄԲԱՅՆԵՐԷՆ

Բայց չէ՛ հետեւեցան գետեզրի այն պզտիկ արահետին ուսկից քիչ մը առաջ ոստիկանաց անցնիլը տեսած էին։ Ասոնք կրնային ետ դառնալ, աւարտած ըլլալով իրենց քննութիւն, և քանի մը նշաններէ ուշարթուած, ո՞վ գիտէ թէ երիտասարդներուն վտանգաւոր հարցումներ չպիտի ուղղէին։ Աննշան մանրամասնութիւն մը կրնար զանոնք մատնել։

Ճամբուն հասան, մէկ երկու քիլոմէթրի չափ յառաջացան, յետոյ գիւղական ուղի մը բռնեցին, առանց տեղեկանալու իսկ թէ ո՛ւր կը տանէր այդ ուղին։

Իրենց համար՝ ամենէն կարեւորն էր հեռանալ այն երկրէն, ուրպէս զի ալ ոչ ոք իրենց ուշադրութիւն ընծայէ։

Բարեկեան սաստիկ ուրախացած կ'երեւէր ճամբորդելուն։ Անոնց շուրջը կ'երթար կուգար, առանց երբէք կանգ առնելու, վազվռտելով նորահաս հունձքե...

[illegible]

Մեծ անտառներուն մէջէն ճամբայ ելան դէպ ի Բրէս-տը-Մառպրը։

Երկար ժամանակ Շարլօ անխօս մնաց։

Կը զգար որ եթէ խօսիլ ուզէր, պիտի բռնէր ինքզինքը։ Պիտի սկսէր հեծկլտալ։

Սակայն, վերջապէս, չկրցաւ ինքզինքը... [illegible]

[illegible]

